# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԲԵՄԱԿԱՆՔ

* Կիր. 1 Յունիս.— ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ) եւ Բարեկենդան Եղիական Պահոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպ. Ասլանեան: Ըստ սովորութեան, ի ժամ Ս. Պատարագի կարդացուեցաւ Ս. Յովհ. Ոսկեբերանի Հոգեգալստեան ճառը՝ գրուած ի գէմս Ս. Երրորդութեան իւրաքանչիւր անձին: Իսկ Հայր մերէն առաջ, Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոսի գլխաւորութեամբ կատարուեցաւ Հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքաց Հոգիներուն համար: Արարողութիւնները ձայնասփռուեցան Իսրայէլեան ռատիոկայաններէն:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան», որուն նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս: Ապա կարդացուեցաւ Լամբրոնացիի Հոգեգալստեան Ներբողը:

— Ժամը 4ին, Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր եւ ժառանգաւորաց սաներ մեկնեցան Սիոն լեռ, եւ Ս. Հոգւոյն առաքեալներուն վրայ իջման տեղւոյն –Սիոնի Վերնատան– վրայ կառուցուած աղօթավայրին մէջ կատարեցին օրուան պատշաճ արարողութիւն: Ապա խօսեցաւ Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետ, պատմական Սրբավայրին, որմէ ետք նախագահեց Ս. Փրկչի գերեզմանատան մէջ, եկեղեցւոյ գաւթին մէջ, Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքաց Հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտօնին:

* Շբ. 7 Յունիս.— Է. օր Հոգեգալստեան: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի տանիքի արեւելակողմը գտնուող Ս. Հոգւոյ նուիրուած մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Կիր. 8 Յունիս.— Յիշատակ Եղիայի մարգարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նարեկ Աբղ. Մարֆաղէլեան:

— Ս. Հռիփսիմեանց նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետս: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Բշ. 9 Յունիս.— Ս. Կուսանացն Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ. իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցիի աւանդատան՝ Ս. Հռիփսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Աբղ. Ղարիպեան:

* Ուր. 13 Յունիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս:

* Շբ. 14 Յունիս.— Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին. Յիշատակ նշխարացն ի Վիրապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս: Ապա, ըստ սովորութեան, երգուեցաւ «Տէր Ողորմեա»:

* Կիր. 15 Յունիս.— Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Սեւան Աբղ. Ղարիպեան: «Հայր մերէն առաջ, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» վասն Մայր Աթոռոյ:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին նախագահեց Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս:

* Շբ. 21 Յունիս.— Ս. Մեծին Ներսէսի եւ Խադայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նարեկ Աբղ. Մարֆաղէլեան:

* Կիր. 22 Յունիս.— Բարեկենդան Ս. Լուսաւորչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան:

* Ուր. 27 Յունիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս:

* Շբ. 28 Յունիս.— Գիւտ Նշխարաց Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ, ուր մասունք մը կայ ամփոփուած Ս. Լուսաւորչէն: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ադան Աբղ. Գալիօզեան:

* Կիր. 20 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեփան Աբղ. Մխսեան:

digitised by A.R.A.R.@

* Դշ. 2 Յուլիս.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուած Թարգմանչաց նախատօնակին։

* Եշ. 3 Յուլիս.— Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային)։ Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան, որ եւ քարոզեց, բնաբան առնելով օրուան Ճաշու Աւետարանի տողերը հատուածը. «Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ արքայութիւնն» (Ղուկ. ԺԲ. 32)։ Ս. Պատարագը և քարոզը, երկու ժամերու տեւողութեամբ ձայնասփռուեցան Իսրայէլի ռատիօ-կայանէն։

* Շբ. 5 Յուլիս.— Ս. Տրդատայ թագաւորին եւ Աշխէն Տիկնոջն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գիլխադիր․ ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Կիր. 6 Յուլիս.— Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ․ ժամարարն էր Հոգշ. Տ. Ներսէս Աբղ. Մարֆաղեան։ Երթն ու դարձը թափօրներուն նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Ուր. 11 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս։

* Շբ. 12 Յուլիս.— Ս. Երկոտասան առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ երեքտասաներորդ առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատրան մէջ․ ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Աբղ. Ղարիպեան։

* Կիր. 13 Յուլիս.— Բարեկենդան Վարդավառի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ․ ժամարարն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան։

— Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Տեսուչ Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Գազազեան խօսեցաւ Քրիստոսի առաքեալներու աշակերտներուն հաւատքին եւ հաստատակամութեան մասին։

* Ուր. 18 Յուլիս.— Տապանակի տօնին նախատօնակը կատարուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածնի մատրան մէջ, Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս։

* Շբ. 19 Յուլիս.— Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին․ ժամարարն էր Հոգշ. Տ. Աղան Աբղ. Պալիօզեան։

— Մայր Տաճարին մէջ պաշտուած Այլակերպութեան մեծահանդէս նախատօնակին եւ անոր յաջորդող Տեառնեղբօր գահակալութեան հանդիսութեան նախագահեց Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս։

— Գիշերուան կէսերին, Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեղեցւոյ» եւ Հսկման կարգեր, Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Կիր. 20 Յուլիս.— ՎԱՐԴԱՎԱՌ (Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս Աճէմեան եւ քարոզեց՝ «Եւ այլակերպեցաւ առաջի նոցա» բնաբանով: Մեր Տիրոջ պայծառակերպութեան մասին խօսելէ ետք, Գերշ. Սրբազանը վեր առաւ կարեւորութիւնը առաքելական Ս. Աթոռին, որուն առաջին եպիսկոպոսապետին՝ Ս. Յակոբոս Տեառնեղբօր գահակալութեան դէպքը աւանդութիւնը կապուած է այս տօնին։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստանի» նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Բշ. 21 Յուլիս.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գիլխադիր․ ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան։ Այս, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ կատարուեցան հոգեհանգստեան հանդիսաւոր կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ եւ ապա գաւիթը՝ Երջանկայիշատակ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարք Հօր շիրմին վրայ։

* Ուր. 25 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս։

* Շբ. 26 Յուլիս.— Ս. Թադէոսի առաքելոյն մերոյ եւ Սանդխտոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գիլխադրի մատրան մէջ․ ժամարարն էր Հոգշ. Տ. Ներսէս Աբղ. Մարֆաղեան։

* Կիր. 27 Յուլիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ․ ժամարարն էր Հոգշ. Տ. Սիփան Աբղ. Մխսեան

digitised by A.R.A.R.@